



**ԾԱՆՈՒՑՈՒՄ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ ԱՅՆ ՕՐԿԱ ՄԱՍԻՆ, ՈՐԻՑ
ՅԵՏՈ ԶԱՂԱՔԻ ԱՅՍ ԿԱՍ ԱՅՆ ՕՐԻՆԱԳԾԻՆ ԿՈՂՄ ԿԱՍ
ԴԵՍ ՈՐԵՎԷ ՓԱՍՏԱՐԿ ՉԻ ԿԱՐՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ
ԶԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՎԱՐԻՆ**

ՍՈՒՅՆՈՎ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է, որ Բըրբենք քաղաքի Զաղաքային ընդհանուր ընտրությունները տեղի կունենան Բըրբենք քաղաքում, 2020 թ. նոյեմբերի 3-ին, երեքշաբթի, ընդ որում ընտրողներին կներկայացվի հետևյալ օրինագիծը.

<p>Օրինագիծ _____</p> <p>Պե՞տք է, արդյոք, ընդունել հետևյալ դրույթներն ամրագրող օրինագիծ. արդարացի հիմքով վտարման դրույթներ ու տեղափոխման վճարներ, նախքան 1995 թ. փետրվարի 1-ը կառուցված բնակարանների վարձը կարգավորող ակտեր՝ որոշ բացառություններով, տարեկան վարձի աճի սահմանափակում 0-ից 7%-ի սահմաններում՝ ելնելով սպառողական գների ինդեքսից, նորացված, հինգ անդամից կազմված Վարձատու բնակարանատերերի և վարձակալ բնակիչների հանձնաժողով՝ կարգավորիչ դրույթների կենսագործման ու կառավարման նպատակով, ներառյալ բյուջեն ձևավորելը, վճարներ սահմանելը, աշխատակազմ, ընդ որում՝ փաստաբաններ հավաքագրելը, ինչպես նաև դատական վարույթներ նախաձեռնելը՝ ընդամին գործելով Բըրբենքի Զաղաքային խորհրդից, Բըրբենք քաղաքի Կառավարչից ու Բըրբենք քաղաքի Փաստաբանից անկախ:</p>	<p>Այո</p> <p>_____</p>	<p>Ոչ</p> <p>_____</p>
---	-------------------------	------------------------

ՍՈՒՅՆՈՎ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է ՆԱԵՎ, որ ըստ Կալիֆորնիա նահանգի Ընտրական օրենսգրքի Յոդված 4, Գլուխ 3, Բաժին 9-ի, Զաղաքի օրենսդիր մարմինը, կամ դրա լիազորությունն ունեցող ցանկացած անդամ կամ անդամներ, կամ ցանկացած անհատ ընտրող, կամ քաղաքացիների՝ իրապես գոյություն ունեցող միավորում, կամ ընտրողների ու միավորումների ցանկացած համադրում, կարող է 300 բառը չգերազանցող գրավոր փաստարկ ներկայացնել Զաղաքի օրինագծին կողմ կամ դեմ՝ կից տրամադրելով նաև այն ներկայացնող(ներ)ի տպագիր անուն(ներ)ն ու ստորագրություն(ներ)ը, կամ, եթե ներկայացնողը կազմակերպություն է, ապա այդ կազմակերպության անունն ու դրա՝ փաստարկի հեղինակ հանդիսացող հիմնական պաշտոնատար անձանցից առնվազն մեկի տպագիր անունն ու ստորագրությունը:

ՍՈՒՅՆՈՎ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է ՆԱԵՎ, որ, ելնելով այն նկատառումից, թե Զաղաքի Գործավարին ողջամիտ կերպով որքան ժամանակ է անհրաժեշտ փաստարկներն ու ընտրություններին Ընտրողների տեղեկատվական ուղեցույցը պատրաստելու և տպագրելու համար, 2020 թ. օգոստոսի 14-ի հրապարակված սովորական աշխատանքային օրվա ավարտը սահմանվում է իբրև այն վերջնաժամկետը, որից հետո Գործավարին որևէ փաստարկ ներկայացնել չի կարելի Զաղաքի օրինագծ(եր)ի կողմ կամ դեմ՝ Յոդված 4-ի համաձայն տպագրելու և ընտրողներին այն բաժանելու համար: Փաստարկները պետք է ներկայացվեն Զաղաքի Գործավարին, և ուղեկցվեն դրա հեղինակ(ներ)ի տպագիր անուն(ներ)ով ու ստորագրություն(ներ)ով, կամ, եթե կազմակերպության անունից են ներկայացվում, ապա այդ կազմակերպության անվամբ, ինչպես նաև փաստարկի հեղինակ հանդիսացող առնվազն մեկ հիմնական պաշտոնատար անձի տպագիր անվամբ ու ստորագրությամբ, հետևյալ հասցեով. City of Burbank City Hall, 275 E. Olive Ave., First Floor, Burbank, California 91502: Փաստարկներում կարելի է փոփոխություն անել, կամ դրանք ետ կանչել մինչև ու ներառյալ Զաղաքի Գործավարի կողմից սահմանված վերջնաժամկետը:

ՍՈՒՅՆՈՎ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է ՆԱԵՎ, որ Զաղաքային խորհուրդը որոշել է, որ հակափաստարկները, որոնց ծավալը չի կարող գերազանցել 250 բառը՝ այնպես, ինչպես դրանք ներկայացվել են ուղիղ հակափաստարկների հեղինակների կողմից, կարող են ներկայացվել Զաղաքի Գործավարին մինչև 2020 թ. օգոստոսի 24-ը, հրապարակված սովորական աշխատանքային ժամերին՝ ուղեկցվելով դրանք

Ներկայացնող հեղինակ(ներ)ի տպագիր անուններով (անվամբ) ու ստորագրություններով (ստորագրությամբ), կամ, եթե կազմակերպության անունից են ներկայացվում, ապա այդ կազմակերպության անվամբ, ինչպես նաև փաստարկի հեղինակ հանդիսացող առնվազն մեկ հիմնական պաշտոնատար անձի տպագիր անվամբ ու ստորագրությամբ, ոչ ուշ, քան ուղիղ փաստարկների ներկայացման վերջնաժամկետից 10 օր անց:

ՍՈՒՅՆՈՎ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է ՆԱԵՎ, որ Ընտրական օրենսգրքի իրավասությամբ ներկայացված ցանկացած կարգադրություն, անկողմնակալ վերլուծություն, կամ ուղիղ փաստարկ մատչելի կլինի հանրային զննման համար Զաղաքային Գործավարի գրասենյակում, ոչ պակաս, քան 10 օրացուցային օր նախքան փաստարկների ու վերլուծության ներկայացման վերջնաժամկետը: Ընտրական օրենսգրքի իրավասությամբ ներկայացված ցանկացած հակափաստարկ մատչելի կլինի հանրային զննման համար Զաղաքային Գործավարի գրասենյակում, ոչ պակաս, քան 10 օրացուցային օր նախքան հակափաստարկների ներկայացման վերջնաժամկետը:

Չիզեթ Մուլլինզ (Zizette Mullins), MMC
Ընտրական պաշտոնյա/Զաղաքի Գործավար
Հրապարակման ամսաթիվը. Օգոստոսի 7, 2020